

Հ Ո Ղ Վ Ա Ծ Ն Ե Ր

ԱՐԾՐՈՒՆԻ ՄԱՀԱԿՅԱՆ

ՄԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀՈՒԴԱՅԱԿԱՆ ԱԿՈՒՆՔԸ ՆՈՅԻ ՏԱՊԱՆՈՎ ՍՐԲԱՑՎԱԾ ԼԵՌԱՆ ԱՌԱՍՊԵԼԸ*

Բանայի բառեր – Նոյան տապան, Արարատ-Մասիս, Կորդուք, հուղայական համայնք, Նախճուան-Նախիջևան, Հովսեպոս Փլավիոս

Արդեն, իբրև հավաստի գիտելիք, պետք է արձանագրել, որ Սուրբ գրքում նշված Արարատի լեռները, երկիրն ու թագավորությունը համապատասխանում են Հայաստանին, և որ Միջագետքի սրբազան ասքերի տապանակիր լեռը (Կորդվագ լեռներ) Ուրարտու-Արմենիա-Հայաստանում է¹:

Հարկ է մեկնաբանել, թե ինչու և ինչպես հայկական լեռնաշխարհից իբրև տապանակիր լեռներ ընտրվեցին Ջուղի լեռը՝ միջագետքյան (շումերա-աքքադա-բաբելոնյան) վիպական ավանդույթում, Մասիս-Արարատը՝ եբրայական ավանդույթում, իսկ հետագայում, երբ քրիստոնեության և իսլամի շնորհիվ տիրապետող դարձավ միայն Նոյան տապանի առասպելը, Նոյի տապանակիրը դարձավ մի դեպքում Ջուղի լեռը, մյուս դեպքում՝ Մասիս-Արարատը: Իսկ ցայսօր այնուհետև, հաղթող դարձավ Մասիս-Արարատը քրիստոնեական աշխարհում, իսկ Ջուղի լեռը՝ իսլամական աշխարհում:

XIX դ. վերջերից Ջ. Ֆրեզերի շնորհիվ հայտնի դարձավ, որ Սուրբ գրքում և Գիլգամեշի էպոսում վկայված աշխարհակործան ջրհեղեղը համաշխարհային բանահյուսական մոտիվներից է²: Թե այդ մոտիվով միջերկրածովյան ավազանում և Մերձավոր Արևելքում որքան պատումներ ու տարբերակներ են ստեղծվել, անհայտ է, բայց դրանցից պահպանվել և գրավոր շրջանառության մեջ են դրվել վերոնշյալ երկու վիպասքերը. միջագետքյանը՝ Ջիուսուդրա (=երկարատև կյանք)-Ուտնափիշտիմի (=շունչ գտավ) և եբրայականը՝ Նոյի (=հանգստություն, մխիթարություն) մասին: Դատելով հերոսների

* Հոդվածի հիմքում ընկած է 2014 թ. ԵՊՀ պատմության ֆակուլտետի գիտաժողովի զեկուցումը նվիրված նախիջևանցի պատմաբան Ստեփան Մելիք-Բախշյանի ծննդյան 90-ամյակին:

¹ Վերջին հոդվածները՝ մատենագիտական տեղեկատվությամբ, տե՛ս **Սարգսյան Դ.**, Բիբլիական Արարատի լեռները ըստ սեպագիր արձանագրությունների // «Պատմաբանասիրական հանդես» (այսուհետև՝ «ՊԲՀ»), 2001, թիվ 2, էջ 268-276, **Սուշեդյան Ա.**, Ո՞ր լեռն է վրա է իջել Նոյան տապանը // «ՊԲՀ», 2003, թիվ 1, էջ 3-39:

² Տե՛ս **Փրեզեր Ժ. Ժ.**, Фольклор в ветхом завете, М., 2003, с. 77-102:

անունների իմաստներից¹ և նրանց գործառույթներից՝ կարելի է ասել, որ դրանք վիպական ծագում ունեն, ինչպես նաև՝ արքայական տարբերակում տապանակիր լեռան անունը՝ Նիսիր (=փրկություն): Մյուս դեպքերում տապանին ապաստան տված լեռն անորոշ է, բայց երկիրը, որտեղ այն գտնվում է, Հայաստանն է: Առայժմ այդ միակ կոնկրետ-պատմական ընդհանրության հիման վրա, աստիճանաբար իրար ձգելով, նմանվում են երկու ավանդավեպերի այլ մասեր ևս և վերջապես ստեղծում մի խառնիխուռն վիճակ, որտեղ դեռևս ամբողջությամբ չեն կողմնորոշվել անգամ գիտնականները: Նրանք դեռ վիճում են, թե որտեղ է իջել Նոյան տապանը՝ կարծես «տրամաբանելով», որ դա միայն մեկ վայրում կարող էր լինել: Հաշվի չեն առնում, որ Պաղեստինում կամ Միջագետքում հյուսվող լեգենդներում տապանակիր երկիրը կարող է կոնկրետ լինել, ինչպես և է, բայց այդ օտար երկրի լեռներից մեկը գատել և համարել տապանակիր պարտադիր չէ, որովհետև տվյալ երկրի տեղանքն անծանոթ է՝ անծանոթ անուններով: Սա՛ է վեպի և վիպասացի տրամաբանությունը: Մի խոսքով, կամ հարկ է տալ գործառական վիպական անվանում, ինչպիսին է՝ Նիսիր, և դա նույնպես բխում է բանավոր վեպի պոետիկայից, կամ անորոշ թողնել «Հայաստանի լեռներ» բնորոշումը: Վեպը հյուսողի տեսակետից կարող է սխալ կամ սուտ դուրս գալ կոնկրետ լեռնանուն նշելը, որովհետև չգիտես, թե այդ լեռնանունը կամ լեռն ինքնին որևիցե նշան կրում է՝ ցույց տալու, որ իրոք տապանակիր է: Իսկ երբ վիպասքը դառնում է հեղինակավոր ու սրբազան ճշմարտություն, այդ ժամանակ վերջինիս ազդեցությամբ հայտնվում են կոնկրետ տապանակիր լեռներ՝ արդեն տեղաբնիկների ջանքերով: Եվ իրոք, եթե սրբազան վիպասքի նպատակը մեղքի և փրկության հակադրումն է, կյանքի պահպանման կամ մեկ այլ վեհ գաղափար, ապա տեղաբնիկի նպատակը երկրորդային ու ածանցյալ է, այն է՝ տվյալ լեռան կամ ապրելատեղի, իբրև սրբազան վայրի, պանծացումը:

Սրբազան վիպական ավանդույթին ուղեկցող այս վարքագծային կանոնը կարելի է արտածել նաև ջրհեղեղյան երկու վիպասքի օրինակներից, եթե ճիշտ պատմական հենքի վրա դիտարկենք գրավոր ու բանավոր պահպանված վաղնջական կցկտուր տեղեկությունները:

Ամենից առաջ պետք է ամրագրել, որ եթե միջագետքյան վեպում ջրհեղեղից փրկվում են ոչ միայն հերոսները, այլև այն մարդիկ, ովքեր, ինքնուրույն բարձրանալով, ապավինել են լեռանը, ապա սուրբգրային ասքում միայն Նոյն է փրկվում՝ իր հետ տապանում տեղ տալով իր ընտանիքին և կյանքի շարունակման համար անհրաժեշտ կենդանական զույգերին: Հետևաբար իզուր չէ, որ միջագետքյան տապանակիր լեռը, որն այլ մարդկանց ևս ապաստան է տվել, ավելի մատչելի է, ինչ-որ տեղ կենցաղայնացված և նավի կուպրային մնացորդներով օժտված:

¹ См. у Мифы народов мира, М., 1980, т. 1, с. 467, т. 2, с. 224:

Բաբելոնի Բելի տաճարի քրմապետ և պատմիչ Բերոսոս Քաղդեացին մ. թ. ա. III դարի I կեսին գրում է (մեջբերումը՝ ըստ Հովսեփոս Փլավիոսի քաղվածքի), որ «մինչև հիմա էլ նավի մի մասը գտնվում է Հայաստանում՝ Կորդվաց լեռների մոտ, և որ ոմանք (նրա վրայից) պոկելով կուպրի կտորներ են բերում, և մարդիկ դրանք կրում են իրենց վրա՝ իբրև հուռուրթ»¹: Հասկանալի է, որ առաջին անգամ տապանակիր լեռան գրավոր կոնկրետացումը Հայաստանի տվյալ գավառում, տվյալ լեռան տվյալ հատկանիշով, թեկուզ առանց անվանելու, թույլ է տալիս շատ գիտնականների (Հ. Գեյցեր, Մ. Աբեդյան, Ս. Երեմյան, Ի. Դյակոնով և այլք) նման լեռ համարել Ջուղի-Դաղը, որ արաբերեն (Ջաբալ Ջուղի) նշանակում է «բարձր», «մեծ», «խոշոր» և այն նույնացնել Ասորեստանի թագավոր Աշշուրնաձիբապալ II-ի (884/3-859) սեպագիր արձանագրություններից մեկի մեջ նշված Նիբուր լեռնանվան հետ: Դատելով այն բանից, որ Ջուղի անունը կարող էր Նիբուր-ի հետագա թարգմանությունը լինել, կարելի է ասել, որ այդ լեռը իր անունը ստացել է տվյալ միջավայրում ամենամեծը լինելու հատկանիշի հիման վրա (2089 մ): Սակայն, արդյո՞ք մեծ լինելու հատկանիշն է միակ իրական հիմքը եղել այն տապանակիր կոչելու համար: Չէ՞ որ հայոց լեռնաշխարհում շատ կան բարձր գագաթներ, որոնք իրենց տարածաշրջաններում համարվում են ամենաբարձրը: Ուրեմն դա անհրաժեշտ, բայց բավարար հատկանիշ չէ: Հարկավոր է նշան, և այդ նշանը կուպրն է՝ ձյուրթ, որը, իբրև նավթային գոյացություն, բնականից հատուկ է Ջուղիին: Եվ պատահական չէ, որ այդ լեռը զուգահեռաբար կոչվել է նաև Գուդրուն, որը բնական այդ հատկանիշի հիման վրա ընդգծվել է իբրև հատուկ անուն, հայերեն կլինի Կուպրի սար: Այստեղից կարող է հարց ծագել, թե արդյո՞ք Ջուղի անունը ևս բխում է դրանից...

Ինչևէ, մի բան պարզ է, որ բուն Միջագետքի վիպաստեղծ կենտրոնում չեն նախատեսել նման նշանակիր լեռ, նրանց բավարարել է «Արմենիայի լեռները» բնորոշումը, բայց այն տեղաբնիկները, ովքեր կրողն են այդ սրբազան ավանդույթի, շահագրգռված են իրենց տեղանքում տեսնելու այդ փրկարար լեռը:

Հայտնի է, որ Հայաստանի սահմանային շրջաններում մշտապես գոյություն ուներ էթնիկապես խառը բնակչություն: Տվյալ դեպքում հայոց հարավային գավառներում և հարևան հյուսիսային Միջագետքում հայերը գիրկընդխառն ապրում էին սեմական ժողովուրդների հետ (սքքադական, ասուրա-բաբելոնական, արամեա-ասորական և այլ էթնիկ տարրեր): Առաջին հերթին հենց սրանք են ջանում տապանակիր լեռան նշաններ հայտնաբերել իրենց բնակավայրում, սրանց հետևողությամբ՝ նաև տեղաբնիկ հայերը, որոնք յուրացնում էին այդ վիպական ավանդույթը, ինչի արդյունքում տա-

¹ **Հովսեփոս Փլավիոս**, Հրեական հնախոսություն, «Օտար աղբյուրները հայերի և Հայաստանի մասին», հ. 9, աշխատ. Մ. Կրկյաշարյանի, Երևան, 1976, էջ 55:

րածվում և ընդհանուր ճանաչում էր գտնում փրկարար լեռան համբավը: Նույն Հովսեփոս Փլավիոսի վկայությամբ՝ այդ մասին գրել են վաղ հեղինակներ Հերոնիմոս Եգիպտացին, Մնեսիասը և այլք, որոնցից, սակայն, Հովսեփոս Փլավիոսը միայն մ. թ. ա. I դարի հեղինակ Նիկողայոս Դամասկացու խոսքն է մեջբերել. «Մինիասից վերև Հայաստանում կա մի խոշոր լեռ՝ Բարիս անունով, որտեղ, պատմության համաձայն, շատերը, ապաստանելով, փրկություն են գտել ջրհեղեղի ժամանակ, իսկ մեկը, տապանի վրա տարվելով, իջել է գագաթին և տախտակների մնացորդները երկար ժամանակ պահպանվել են: Սա հավանաբար այն մարդն է, որի մասին գրել է Մովսեսը՝ հրեաների օրենսդիրը»¹: Այստեղ կուպրի փոխարեն տախտակի մնացորդներն են նշան ծառայում: Կարող է թվալ, թե Նիկողայոս Դամասկացու ասածը հարում է ոչ թե Բերոսոսի պատումին, որի հերոսը Քսիստոթրոսն է, այլ Սուրբ գրքին, որի հերոսը Նոյն է, որովհետև կուպրի փոխարեն նշանի դեր են կատարում տախտակի մնացորդները: Բայց ոչ, քանի որ հեղինակը, նկատելով իր պատումի նմանությունը Նոյի պատումին, պարզ սահմանազատում է՝ ասելով, որ սա, հավանաբար, այն մարդն է, որի մասին գրել է Մովսեսը: Բացի այդ, նավի մնացորդներից են ոչ միայն կուպրի կտորները, այլ նաև տախտակները, որոնք, ենթադրվում է, պիտի ձյութապատ լինեն: Կարևոր է նաև լեռան բնորոշումը՝ խոշոր, որ հիշեցնում է Ջուդի լեռան իմաստը, թեկուզ վերջինիս ճշգրտությունը կասկածի տակ է: Կա ևս մի ոչ պակաս կարևոր տարբերություն:

Այս պատումի մեջ տապանի հերոսից բացի նաև այլ մարդիկ են փրկվում առանց տապանի: Վերջապես ամենակարևորը. լեռն այստեղ կոչվում է Բարիս, որը առաջ է բերել շատ հետազոտողների հետաքրքրությունը: Ոչ մի այլ տեղ վկայված չէ այդ անունը՝ Բարիս: Դամասկացու գործը մեզ չի հասել, և թվում է, որ այն աղավաղվել է Հովսեփոսի «Հնախոսության» գրչական վերարտադրության ընթացքում, որովհետև մեզ են հասել երկու այլ վկայություններ «Հոբելյանների գրքից» և Եպիփան Կիպրացուց, որոնցում լեռը կոչվում է Լուբար²: Հավանաբար այս երկու վկայության աղբյուրը ևս Նիկողայոս Դամասկացին է, որի մեզ չհասած գրվածքում եղել է հունարենաձև Լուբարիս լեռնանունը³, ինչից հետագայում Հովսեփոս Փլավիոսի օրինակում ընկել է առաջին վանկը, և մնացել է Բարիս: Քանի որ բոլոր դիտարկումները հանգեցնում են Դամասկացու և Բերոսոսի պատումների նույնա-

¹ Նույն տեղում:

² **Մուշեղյան Ա.**, նշվ. աշխ., էջ 11:

³ Բարիսը Մասիսի հետ նույնացնողներին կարող է թվալ, թե Լուբարիս-ը Մասիսի մյուս անվան՝ Ազատ-ի աղավաղված լատիներեն թարգմանությունն է ժողովրդական միջավայրում՝ փոխանակ լիբերիս-ի, բայց դա խաբուսիկ է: Մասիսի և Բարիսի նույնացման մի այլ հիմնավորում է տվել պ.գ.դ. Արտակ Մովսիսյանը՝ ելնելով բառի սեպագրային ընթերցումից: Տե՛ս **Մովսիսյան Ա.**, Սրբազան լեռնաշխարհը, Երևան, 2000, էջ 50-52:

կանացմանը, մեզ մնում է համարել, որ Լուբար լեռը նույն Նիբուր և նույն Ջուդի-Դադն է: Կարելի է անգամ կռահել այն ուղին, որով լեռնանվան սկզբնաձևի աղավաղումից ծնվել են Նիբուրը և Լուբարը, եթե հաշվի առնենք, որ Նիբուր-ը հունարեն վկայված է նաև Նիբարիս¹ ձևով, իսկ Ն>Լ ձայնորդային փոխարկումը դյուրին ձևով կարող է լինել բանավոր արտասանության եղանակով. Նիբուր<Նիբուրիս<(Նիբարի ս)<Նուբարիս>Լուբարիս>Լուբար: Այն է՝ ամենավաղ հիմքը ներկայացնում է Նուբար(իս) ձևը, որն ստացվում է վերականգնումով:

Այսպիսով, վկայակոչվել են նույն փրկարար լեռան մի քանի անուններ՝ Նիբուր, Լուբար, Ջուդի, Գուդրուն, որոնցից առաջին երեքը նշում են բարձր լինելու հատկանիշը, վերջինը՝ կույրի հանք ունենալը, և կամ բոլորն են բխում վերջինիս իմաստային դաշտից:

Վերջին հատկանիշն է շեշտում նաև Ալեքսանդր Բազմավեպը Բերոսոսի հիման վրա՝ Եվսեբիոս Կեսարացու քաղվածքի համաձայն. «Եւ ի նաւէն, որ չոգաւ դադարեաց ի Հայս, և ցայժմ սակաւ ինչ մասն ի Կորդուացոց լերինն ի Հայոց աշխարհին մնալ ասեն, և ոմանց քերել բերել ի ծեփածոյ նաւին նաւթոյ ի բժշկութին և ի ջնջոց ցաւոց ինչ բժժանաց»²: Իսկ փայտի մնացորդաց վրա է ուշադրություն դարձնում Աբյուդենոսը. «Եւ անդէն վաղվաղակի դիքն գնա (գՍիսիթոս) ի մարդկանէ հետակորոյս առնէին, և նաւն երթեալ յաշխարհն Հայոց դադարէր և ի փայտիցն դէղ օգնականութեան բնակչաց աշխարհին պարզներ»³:

Այսպիսով, հատկապես հելլենիզմի դարաշրջանում սեմական ժողովուրդների հետ (հուդայականներից գատ) միջազգետքյան լեզենդի կրող ու տարածող է դառնում նաև հունահռոմեական աշխարհը:

* * *

Այժմ անդրադառնանք ջրհեղեղի եբրայական ավանդույթին, որի կրողն ու տարածողը հիմնականում հրեաներն են հայրենիքում ու սփյուռքում և ընդհանրապես հուդայականները: Եթե միջազգետքյան լեզենդը տարածվում էր հունահռոմեական աշխարհում՝ իբրև ճանաչողական գիտելիք, ապա Նոյի առասպելը հուդայական սփյուռքում՝ իբրև կրոնական սուրբգրային գիտելիք: Հետևաբար, դրանց տարածման գոտիները մինչև քրիստոնեությունը անհամեմատելի էին հոգուտ միջազգետքյանի, եթե անգամ հաշվի առնենք, որ նույն այդ հելլենիզմի շրջանում եբրայերենից կտրված հրեաները կրոնական սրբազան տեղեկատվություն քաղում էին իրենց իսկ կողմից հունարեն

¹ **Երեմյան Ս.**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», Երևան, 1963, էջ 39:

² Եւսեբի Պամփիլեյս Կեսարացու ժամանակականք....., Մասն Ա, ի Վենետիկ, 1818, էջ 36-37:

³ Նույն տեղում, էջ 49-50:

թարգմանված Սուրբ գրքից (Մեպտուազինտա = Յոթանասնից - մ. թ. ա. III-I դդ.): Կարելի է կարծել, որ հենց այս ժամանակներից է սկիզբ առնում հետագայի քրիստոնյաների մեջ շատ տարածված մի երևույթ՝ աշխարհը «բիրլիականացնելու» կամ այլ կերպ ասած՝ համաշխարհային պատմությունը Սուրբ գրքի հետ հարմարեցնելու միտումը: Հասկանալի է, որ այդ միտումը որոշակիորեն պետք է հենվեր սուրբգրային տվյալների, հատկապես՝ Ծննդոց գրքի ու մարգարեությունների յուրովի մեկնաբանումների վրա: Վերոնշյալ միտումը, բնականաբար, դրսևորվում էր սփյուռքի այն բնակավայրերում, որտեղ հրեաները համայնքով էին ապրում:

Հայտնի է, որ մ. թ. ա. I դ. I քառորդում Հայոց արքա Տիգրան Մեծը Հայաստանի քաղաքներում բնակեցրեց մեծաքանակ հուդայականների, որոնց թվում կային կապադովկացիներ, կիլիկեցիներ, հույներ և հրեաներ: Վերջիններս Հայաստանում մինչ այդ եղել են բնական, ցաքուցրիվ տարագրման (միգրացիայի) եղանակով¹, ուստի և հայ իրականության մեջ որևէ զգալի հետք չեն թողել, բայց ահա մ. թ. ա. I դ. II կեսին, երբ հուդայական գաղթականները, որոնք V դ. հայ իրականության մեջ հրեա են կոչվում, զանգվածորեն տեղավորվել ու ինտեգրվել էին նոր սոցիալ-տնտեսական ու մշակութային միջավայրում, սկսում է գործել վերոնշյալ միտումը՝ Հայաստանի բիրլիականացումը կամ, կրոնական տեսակետից, յուրայնացումը (ոչ թե յուրացումը): Դժվար չէ պատկերացնել, որ այս առումով «Հայահրեից» գաղութի բախտը բերել էր, որովհետև Սուրբ գիրքն առատորեն հնարավորություն էր ընձեռում հուդայականներին՝ պանծացնելու իրենց նոր բնակավայրը՝ որպես «դրախտավայր» ու փրկարար Նոյան տապանի հանգրվան: Դեռ ավելին, սուրբգրային հիշատակումների և աշխարհագրական ու տեղանվանական տվյալների «բարենպաստ» համադրումները առիթ էին տալիս որոշ առավելություններով զերգանցելու ոչ միայն տարաշխարհի հուդայական գաղութներին, այլև հյուրընկալ երկրի այլ հուդայական համայնքներին: Ավելորդ է ասել, որ իրենց գաղութի ու երկրի գովազդը Հայաստանի հուդայականները հասցնում էին տարբեր առևտրական կենտրոններ, իսկ ուխտավորները Երուսաղեմ, ի լուր համայն հրեության: Փաստորեն, եթե դարեր առաջ Արարատի երկիր-Հայաստանն էր հայտնվել Սուրբ գրքում², այդուհետև՝ մ. թ. ա. I-մ. թ. I դդ. Սուրբ գիրքն է հայտնվում Հայաստանում, որովհետև հուդայական համայնքների միջոցով հայերը յուրացնում էին ոչ միայն Սուրբ գրքի ինչ-ինչ տեղեկություններ, այլև դրանց հարասող նորաստեղծ համայնքային ավանդություններ ու մեկնություններ:

Փավստոս Բուզանդի «Պատմությունից» հայտնի է, որ «հրեական» համայնք է եղել նաև Գողթնի Նախճուան քաղաքում, որին բոլոր մյուս հա-

¹ Մ. թ. ա. I դ. Հայաստանում եղած դեմոգրաֆիկ շարժերի մասին տե՛ս **Մանասերյան Ռ.**, Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ, Երևան, 1997, էջ 156-166:

² **Ինգլիզեան Վ.**, Հայաստանը Սուրբ գրքին մեջ, Վիեննա, 1947:

մայնքների հետ IV դ. 60-ական թթ. գերեվարել է պարսից Շապուհ II-ը: Շուրջ չորս հարյուր տարի գոյություն է ունեցել Մեծ Հայքի Հուդայահրեից գաղութը, և այդքան մեծ ժամանակաշրջանում կարող էր լայն տարածում գտնել Նախճուանի գաղութի այն կարծիքը, թե իբր Նոյի տապանը նստել է Մասիս-Արարատի գագաթին, կամ Տարոնի հուդայականների կարծիքը, թե իրենց նահապետ Մեմը նախ բնակվել է Միմ լեռան ստորոտին, և որ տարբեր ուղղություններով սկսել են ցրվել Ցրոնքից և այլն: Հետաքրքիր է, որ Միմ-Ցրոնքի կեղծ ստուգաբանական ավանդապատումին հետևող հուդայականները Նոյան տապանի հանգրվան են համարել Կորդուքի Ջուդի լեռը, որովհետև վերջինս իրենց ավելի մոտ ու տվյալ տարածքում ևս հանրայնորեն ընդունված էր: Իսկ դրան գուցահեռ հնարավոր էր, որ Գողթնի բնակիչները իրենց գավառի անունը ընկալեին իբրև «գաղթ» բառի փոփոխված ձև, որովհետև Նոյի սերունդների գաղթը սկսվել է այնտեղից և այլն:

Կասկած չկա, որ շատ հուդայական համայնքներ իրենց բնակավայրերի ամենաբարձր լեռները դիտել են իբրև հնարավոր հավակնորդներ Նոյան տապանի հանգրվանի, որովհետև նրանք բոլորը լավ էին հասկանում, որ իրենց Սուրբ գիրքը տեղը որոշակի չի անվանում («ի լեռինս Արարատայ»), ուստի պետք էր այն գտնել: Դրա համար, ինչպես ասվեց, միջավայրում բարձր գագաթ լինելը բավարար չէ, հարկավոր է լրացուցիչ կովան, որը գտան Նախճուանի «հրեաները». նրանք ուշադրություն դարձրին այն հանգամանքի վրա, որ բարձրագույն Ավագ-Ազատ-Մասիսի (5165 մ) ստորոտին գտնվող քաղաքը կոչվում է... Նախիջևան: Դա իբր քիչ է, լեռան լանջին թառած գյուղն էլ կոչվում է... Ակոռի (Արկուռի): Ահա քեզ հզոր կովաններ ի հիմնավորումն տապանակիր լեռան և ի լուր աշխարհի ու տեղաբնիկ հայերի, ում համար Ազատ-Մասիսը առասպելապատ ու խավարչտին լեռ է հանգրվան քաջքերի ու դևերի:

Փորձենք այս դիտարկումները համապատասխան փաստերով տեղավորել պատմական հենքի վրա:

Արևելյան Հայաստանում պատմական Գողթն գավառի նշանավոր կենտրոնը՝ Նախճուանը, որ հայերեն գրավոր հիշատակվել է սկսած V դարից, ժողովրդախոսակցական լեզվով մինչև օրս կոչվում է Նախիջևան: Տեղանվան նախնական և վերջնական նշված տարբերակների միջև, պետք է ենթադրել, որ կապող օղակ է եղել «Նախճուան»/«Նախճեւան» ձևը, ինչպես երևում է ոչ միայն քաղաքի և գավառի անվան թուրքերեն արտասանությունից, այլև հայ ժողովրդական բարբառներից և խոսակցական լեզվից:

Դատելով ժողովրդական մի տարբերակից («Մթամ քիչ ին Շիրվանա, հրմել էկան Նախճեվանա»), որ XIX-XX դդ. տարածված էր Ելիզավետպոլի

* Ասույթը (= Իբր քիչ էին Շիրվանից, հիմա էլ եկան Նախիջևանից) հաճախ կիրառել են XX դարասկզբին ծնված պապիս ծնողները, որոնցից լսել է հայրս՝ Սամվել-Անդրանիկ Սա-

նահանգի Ղազախի գավառում, Նախիջևանին զուգահեռ այդ անվանաձևը կիրառվել է նաև նախորդ դարում: Թե որքան հին է Նախձուան>Նախիջևան անցման միջնորդ տարբերակը, կարելի է կռահել Նախիջևան ձևի հնությունը որոշելու միջոցով:

Մինչ այդ պետք է հիշեցնել, որ Նախձուան անունը հայերենում իրանական փոխառություն է, հավանաբար մինչարշակունյան ժամանակաշրջանից: Համոզիչ չեն, իհարկե, տեղանվան ստուգաբանության եղած փորձերը, որոնք անունը բխեցնում են Կովկասյան «նախ» ցեղանունից, կամ էլ նախձիր (=սպանդ, որս) իմաստից: Տողերիս գրողը դեռևս ասպիրանտական տարիներին տեղանվան մասին հարցրել է ամերիկացի իրանագետ Ջեյմս Ռասսելին, երբ վերջինս Երևանում մասնակցում էր հայագիտական միջազգային առաջին սիմպոզիումին: Ի պատասխան, նա կասկածելով, հայտնել է ենթադրություն, որ «նախձուան» կարող է նշանակել՝ կարևորը, գլխավորը, առաջինը: Այդ կասկածը, սակայն, կարելի է փարատել, եթե նման տեղանունը կիրառվի իշխանական նստավայրի նկատմամբ: Օրինակ, որևիցե իշխանական տարածքում այդ անունը լիովին կարդարացվեր, եթե դրանով ընդգծվեր տվյալ գյուղի կամ քաղաքի իշխանանիստ լինելը, ինչպես թագավորական ընտանիքի և արքունիքի կեցավայրը ոստան կոչելը: Եվ իրոք, այդ իմաստի դեպքում հնարավոր է, որ նույն տեղանունը կրկնվի տարբեր տարածքներում՝ Գողթն, Շիրակ և այլն: Տեղանունների այդ շարքին է դասվում նաև Մամիկոնյանների՝ Տայքից հայտնի մի գյուղի անուն՝ Իշխան (հիշենք Ներսես Տայեցի կամ Իշխանցի կաթողիկոսին), որ պետք է հասկանալ իշխանական, իշխանանիստ իմաստով: Օրինակ, Արշակունիների օրոք Կամսարական իշխանների կեցավայր եղած ավանը՝ Շիրակի Նախձուանը, ըստ պատմահայր Մովսես Խորենացու (III գ., ԼԲ), իրոք, իշխանանիստ էր ոչ միայն անվամբ, այլև մյուս հատկանիշներով (Կամսարական տոհմի մարդկանց բնակատեղի, ստորգետնյա մթերանոց և այլն): Երբվանի՞ց է Նախձուանը հայերենում հնչել Նախիջևան: Առողջ տրամաբանությունը կարող է հուշել այն ժամանակից, երբ այդ փոխառյալ անունը հոլովվեց ժողովրդախոսակցական լեզվում: Այսինքն, եթե փոխառումը եղել է Երվանդյանների օրոք, ուրեմն ամենաուշը մ. թ. ա. III դ. կունենայինք Նախիջևան ձևը: Բարեբախտաբար այս հարցում միայն տրամաբանությամբ չենք կողմնորոշվում: Ունենք մ.թ. I դ. մի վկայություն, որի հեղինակը Հովսեպոս Փլավիոսն է: Նա իր «Հրեական հնախոսություն» գրքում ջրհեղեղի սյուժեի առիթով գրում է. «Երբ տապանը կանգ առավ Հայաստանում գտնվող մի լեռան վրա, Նոքոսը (=Նոյ)...մնաց այնտեղ:ևս յոթ օր սպասելուց հետո նա բաց թողեց տապանի անասուններին, ինքն էլ իր գերդաստանով դուրս գալով՝ Աստծուն

հակյանը (1930-2013): Վերջինիս բացատրելով՝ ասույթն օգտագործվում էր այն դեպքում, երբ տարբեր տեղերից անսպասելի հյուրեր էին գալիս տուն, իսկ հյուրասիրելու բան չկար:

գոհեր մատուցեց և խնջույք արեց ընտանիքի անդամների հետ: Հայերը մինչև օրս այդ վայրը կոչում են իջնելու տեղ (*Αποβατήριο* – *Ս. Ս.*), քանի որ այնտեղ է փրկվել տապանը, և մինչև օրս այդ վայրում ցույց են տալիս բեկորները¹: Գիտնականները գրեթե միաձայն ընդունում են, որ հունարեն *Αποβατήριο* բառը հայկական Նախիջևան տեղանվան թարգմանական պատճենն է²: Հետագայում, Հովսեպոս Փլավիոսից առնելով, «ապոբաստերիոն»-ը իբրև տեղանուն է օգտագործել Եվստատիոս Անտիոքացին (*IV դ.*)³, իսկ Հիերոնիմոսը, այն թարգմանելով լատիներեն, գրում է. «Այս վայրը հայերն անվանում են *Exitus* կամ *Egressus*» (ելման կամ իջման տեղի)⁴:

Այն, որ հայերը մինչև օրս այդ տեղը կոչում են Նախիջևան, հասկանալի է: Իսկ ովքե՞ր որոշեցին, որ դա կապ ունի Նոյի հետ և այդ մասին հաղորդեցին Հովսեպոս Փլավիոսին: Միանշանակ՝ Նախիջևանի հուդայական համայնքի ներկայացուցիչները, ովքեր ուխտի են գնացել Երուսաղեմ: Հովսեպոս Փլավիոսի հաղորդած այս տեղեկությունն անգին է այլ առումներով ևս: Նախ՝ հաստատվում է «Նախիջևան» ձևի վաղ գոյությունը, երկրորդ՝ Հայաստանի «հրեաները», արագ յուրացնելով ժողովրդախոսակցական հայերենը, կեղծ կամ ժողովրդական կոչված ստուգաբանությունների միջոցով Մուրբ գրքին հարասող լեզենդներ էին հորինում, իսկ Նախիջևանը որպես Նոյի առաջին հանգրվան է ընկալվել մ. թ. ա. I դ. II կեսից սկսյալ, երրորդն ամենակարևորն է, ըստ որի՝ նրանք հետագայի քրիստոնյա հայ ժողովրդի համար ակամայից ստեղծեցին նրա ազգային ինքնությունը սնուցող տապանակիր Մասիս-Արարատի խորհրդանիշը:

Բայց ասվեց, որ տապանակիր լեռան ավանդապատումի համար իրական հիմք է ծառայել ոչ միայն Նախիջևան, այլև Ակոռի անունը: Թեկուզ Ակոռի անունը չի նշվում, բայց Աստվածաշնչում Նոյի կողմից լեռան լանջին այգի տնկելուց անուղղակիորեն ենթադրվում է Ակոռիի ավանդապատումը: Համենայն դեպս, վերջինս ածանցված է առաջինից, ուստի կամ հուդայականներն են դրանով ևս ամրացրել Մասիսի տապանակիր լինելը, կամ, ինչն ավելի հավանական է, տեղաբնիկ հայերը Նոյի ու Նախիջևանի լեզենդի ազդեցությամբ հարասել են հարևան հուդայականներին: Փաստն այն է, որ խաղողի որթի մասին եղած պարականոն տեղեկությունները դարձյալ հին են (*I դ.*), վկայվել են Հովսեպոս Փլավիոսի երկում, որը, սակայն, հայերեն թարգմանության մեջ, ցավոք, տեղ չի գտել և Հոբեյանների գրքում⁵: Սակայն

¹ **Հովսեպոս Փլավիոս**, նշվ. աշխ., էջ 54:

² **Murad F.**, *Ararat und Masis*, Heidelberg, 1901, **Սարգսյան Դ.**, նշվ. աշխ., էջ 274 և այլք:

³ **Migne**, *Patrologia Graeca*, t. 18, col. 753.

⁴ **Hieronimus**, *Opera omnia*, Ed. Vallarsi, t. III, p. 125. Հղումն ըստ Ա. Մուշեղյանի նշված աշխատության (նույն տեղում):

⁵ Հմմ. **Հովսեպոս Փլավիոս**, նշվ. աշխ., **Դիոն Կասիոս**, նշվ. աշխ., հմմտ. **Josephus Flavius**, *Antiq. Jud.*, (163): Հղումն ըստ Ա. Մուշեղյանի նշված աշխատության (էջ 35):

դրանք՝ որպես ս. Գրքից անմիջապես բխող բանավոր հարասություններ, կապ չունեն հայերի կամ Հայաստանի հուղայականների հետ: Ինչ վերաբերում է Հոբեյանների գրքին, պետք է ասել, որ խնդրո առարկա որթատունկի ավանդապատումը այնտեղ մտել է նույն բանավոր ավանդույթից՝ միայն թե ասված Կորդուքի համար, որովհետև վերաբերում է Լուրսար լեռանը¹:

Կարելի է ենթադրել, որ եթե Մասիս լեռան ստորոտի քաղաքի անունը Նախիջևան չլիներ, Մասիսը չէր լինի տապանակիր լեռ, կամ այլ ավանդապատում կհորինվեր: Կամ, եթե Շիրակի Նախիջևան ավանում կամ Վանանդի Իջավան գյուղում հուղայական կամ հրեից համայնք լիներ, գուցե և տապանակիր լեռան հավակնորդ դառնար Արագածը և այլն: Սա ավանդապատումի ժանրի պոետիկայից բխող եզրահանգում է, ոչ թե գուշակություն:

Հնարավոր է, որ Նախիջևան անվան «ապացուցողական» ուժն այնքան մեծ է եղել, որ նրա ազդեցությամբ «իջման ավան» նշանակությամբ մի տեղանուն հետագայում հայտնվել է Կորճայք նահանգում՝ արդեն իսկ քրիստոնեական կամ իսլամական միջավայրում: Փաստորեն, այսու ի չիք են դառնում բոլոր այն վեճերը, որոնք արվել են այն հարցի շուրջ, թե Մասիսը երբևից է տապանակիր լեռ ճանաչվել, որովհետև այդ ավանդույթը մ. թ. ա. I դարից մինչև օրս անընդմեջ գոյություն է ունեցել: Համեմատելու համար հիշենք, որ հայոց Կորճայք կամ Կորդուք գավառի տապանակիր Ջուղի լեռան ավանդույթը սկիզբ է առնում ավելի հնուց, գուցե և մ. թ. ա. II հազարամյակից, որովհետև այն ժամանակ, երբ միջագետքյան ջրհեղեղի վիպասքը հյուսվում էր, տարատեսակ սեմական էթնիկ տարրեր արդեն ապրում էին Արարատ-Ուրարտու-Հայաստանի հարավային շրջաններում: Դրա համար Կորդվաց լեռների բարձր գագաթին տրված բոլոր անունները սեմական ծագում ունեն², ուստի Արարադ և Կարդու անունները՝ հնարանքի, իսկ Մարարադը գրչական թյուրիմացության արդյունք պետք է համարել, ինչպես ժամանակին նկատել են Մ. Էմինը, Ստ. Մալխասյանցը, Ֆրիդրիխը և այլք:

Ըստ մշակութային ավանդույթների ժառանգորդման և փոխներթափանցման օրենքների՝ միանգամայն սպասելի էր, որ միջագետքյան ավանդապատումի և նրա տապանակիր լեռան օրինակով Կորդուքում տեղայնացվեր նաև Նոյան տապանի ավանդապատումը, ինչպես որ, իրոք, դա գուցե առաջինը փորձել է կռահել Նիկողայոս Դամասկացին, և լիովին արձանագրել է «Հոբեյանների գիրքը» (I դ.): Մակայն այս բնական մշակութային երևույթի մեջ շեղում մտցրին Հայքի կենտրոնում բնակված հուղայական-

¹ Книга Юбилеев, Введ. и русс. пер. проф. А. Смирнова, Казань, 1895, с. 9.

² Արդյո՞ք նման ծագում չունի նաև Կորդու(+ք) տեղանունը: Հարցն իրավասու է, եթե հաշվենք, որ նրա նմանությունը Գուդրոն-ին պատահական չէ, իսկ եթե ոչ՝ հարցն ավելորդ է, մի խոսքով, պատմահամեմատական հնչյունաբանության խնդիր է:

ները, ովքեր ի լուր աշխարհի հայտնաբերեցին Ազատ-Մասիսն իբր տապանակիր լեռ՝ ցույց տալով Նոյ նահապետի էջքի և Նախիջևանի միջև եղած կապը: Այս նորությունը դեռևս հայտնի չէ «Հոբելյանների գրքի» հեղինակին, բայց նրան զուգահեռ արդեն հայտնի է Հովսեփոս Փլավիոսին: Վերջինս այն բազմիմաց հեղինակն է, ով գիտի թե՛ միջագետքյան տապանակիր լեռը և թե՛ եբրայական վեպի նոր տապանակիր լեռը, ուստի և ինքը կապող դեր է ստանձնում երկու ավանդույթի միջև:

Վերոբերյալ դրույթներից բխում է մի խնդիր. ի՞նչ էր մտածում Հովսեփոս Փլավիոսը՝ ակնհայտորեն նկատելով, որ Նոյի մասին պատումը երբեմն չի համընկնում միջագետքյան պատումը ներկայացնող հեղինակների հաղորդագրությանը: Նա, համարելով, որ երկու պատումները վերաբերում են Նոյին՝ միայն թե անվան փոփոխմամբ, աշխատում էր դրանք հաշտեցնել ու համապատասխանեցնել միմյանց: Եվ դա լավ երևում է այն բանից, որ Հովսեփոս Փլավիոսը սկզբից պատմում է Նոթոսի մասին, հետո թվարկում միջագետքյան ավանդությունը պատմողների կարծիքները՝ կարծես ցույց տալու, որ նույն ջրհեղեղի մասին է խոսքը:

Այս ամենի մասին է վկայում այն իրողությունը, որ Հովսեփոս Փլավիոսը միջագետքյան պատումի որոշ տարրեր ներմուծեց եբրայական պատումի մեջ: Նշենք, օրինակ, որ նա գրում է, թե ջրհեղեղից «մարդկանց մեծ մասը չկարողացավ փրկվել՝ փախուստի ապավեն չունենալու պատճառով»¹, կամ «մինչև օրս այդ վայրում ցույց են տալիս դրա (տապանի) բեկորները»²: Դեռ ավելին, Հովսեփոս Փլավիոսին թվում էր, որ իր նախորդ հեղինակներից կարելի էր որոշ մանրամասներ իմանալ, ասենք, նշվածների կամ տապանի իջման վայրի մասին և այլն: Իգուր չէ, որ «Հոբելյանների գրքի» հեղինակը Նոյան տապանի իջման վայր է կարծել Լուբար լեռը, որը, իրականում, միջագետքյան վիպական տարրերից է: Ահա այս երկու վիպական ասքերի ի մի բերումը և դրանց տարբերությունների հաշտեցումը, որ սաղմնային վիճակում տեսանք «Հրեական հնախոսություն» և «Հոբելյանների գիրք» կոչված աղբյուրներում, մոտ ապագայում ընդօրինակվելու և ոճական հնարք են դառնալու քրիստոնյա պատմիչների երկերում (Եվսեբիոս Կեսարացի, Մովսես Խորենացի և այլք):

Քրիստոնեության տարածման հետ հրեական ավանդույթի հետևորդները շատացան, բայց նրանց մեծ մասը վաղ դարերում դեռևս հակված էր տապանակիր լեռը ցույց տալու Կորդոքում, ինչպես վկայում են Փավստոս Բուզանդը, Մովսես Խորենացին և այլք: Աստիճանաբար, սակայն, ավելի է արմատավորվում ու տարածվում կենտրոնական Հայաստանի հուդայականների ու տեղացի քրիստոնյա հայության կարծիքը, թե Մասիսն է տապա-

¹ Հովսեփոս Փլավիոս, նշվ. աշխ., էջ 54:

² Նույն տեղում:

նակիր լեռը: Մրցակցային մշակույթի այս հետաքրքիր դրսևորումը ծնել է աշխարհագրական նոր անուն երկու լեռների համար. Ջուղի լեռան դեպքում՝ Արարադ, Մասիսի դեպքում՝ Արարատ, որովհետև ս. Գիրքը երբ տեղացի քրիստոնյաների կողմից յուրացվեց նախ մի քանի լեզվով (ասորերեն, հունարեն), ապա թարգմանվեց նաև հայերեն, սուրբգրային «ի լերինս Արարատա» արտահայտությունը ընկալվեց ոչ թե բառացի՝ Արարատի լեռներում, իբրև երկրանուն, այլ սկսեցին հասկանալ, ավելի ճիշտ, իմաստավորել իբրև լեռնանուն՝ Արարատ լեռներում: Այս համոզմունքը աստիճանաբար ավելի ամրացավ վիպական գրավոր շրջանառմամբ՝ զուգահեռաբար, բայց ավելի վաղ վկայությունները պահպանվել են Կորդուքից, ինչպես երևում է նրա շուրջ եղած հիշատակումներից (Եփրեմ Ասորի, Հակոբ Մծբնացի, Փավստոս Բուզանդ, Մովսես Խորենացի): Հետաքրքիր է, որ Հակոբ Մծբնացու վարքում եղած հրաշապատում վիպական տարրերը, որոնք պատմվել են Կորդուքի լեռան շուրջ (ասորական Կարդու լեռ, որը հորինվել է գավառանունից և Ջուղի-Գուղի անվան փոխանորդն է), հետագայում փոխանցվել են Մասիսին, ուստի մինչև օրս Մասսա լանջին է նշվում ս. Հակոբա աղբյուրը: Մակայն Մասիսի համար Արարատ անվան կիրառումը հավանաբար ուշ է եղել, որովհետև վաղագույն վկայություններից մեկը գտնում ենք Գրիգոր Նարեկացու Մատյանում (X դ.), որտեղ Արարատ լեռը ոչ թե փոխաբերաբար առնված է իբրև կշռաքար, ինչպես սխալմամբ թարգմանում են, այլ իբրև բարձրության չափանիշ՝ բարձրակետ¹: Թեկուզ, եթե Վարդան Արևելցու վկայությունը համարենք Եղիշեից բխող, կունենանք ոչ միայն V դ. հիշատակում, այլև երկու զուգահեռ անվանումների փաստարկում. «Արարատու լեռոն ոմանք զԿորդուաց ասեն, այլ ճշմարտու ճշմարտութիւն հայտնի առնէ զնա ի Մասիս գոլ»²: Բնչու՞ է Մասիսը, որովհետև, ըստ հեղինակի, նահանգի անունը Այրարատ է, որից ծագում է Արարատ լեռնանունը³: Ահա սա հիմք է տալիս պնդելու, որ նահանգանունից լեռնանուն ստանալու օրինակը վերցրել են Այրարատից՝ կիրառելով Կորդուքում (հմմ. Այրարատ>Արարատ, Կորդուք>Կորդու>Կարդու), իսկ մինչ այդ երկուսն էլ զուգահեռաբար երկրանվան հիման վրա ստացել են նույն լեռնանունը՝ Արարատ/Արարադ: Հետագայում աստիճանաբար տապանակիր լեռը Այրարատ նահանգի հետ կապվելու է ավելի շատ, քան Կորդուքի հետ, մինչև վերջինիս դուրս մղվելը: Հնագույն վկայություններից հայտնի է Հիերոնիմոսի հիշատակումը (IV դ.), որում, սակայն, լեռնանունը չի նշվում⁴, բայց որը մեծ դեր է խաղալու տա-

¹ **Գրիգոր Նարեկացի**, Մատեան Ողբերգութեան, աշխատասիրությանը Պ. Մ. Խաչատրյան, Ա. Ա. Ղազինյան, Երևան, 1985, էջ 127:

² **Խաչիկյան Լ.**, Եղիշեի «Արարածոց մեկնությունը», Երևան, 1992, էջ 245:

³ Նույն տեղում:

⁴ Այս փաստի և լեռնանունների գործածման հետաքրքիր վերլուծություն է տվել Ա. Մուշեղյանը: Տե՛ս **Մուշեղյան Ա.**, նշվ. աշխ., էջ 31-33, 11-16:

սանակիր Մասիս-Արարատը քրիստոնյա Եվրոպայի հանրային գիտակցութեան մէջ արմատավորելու հարցում:

Արշրունի Տաակյան – *Иудейские истоки формирования одного мирового символа: миф о горе, сакрализованной Ноевым Ковчегом*

В качестве достоверного сведения уже можно отметить следующее: во-первых, упомянутые в Св. Писании горы, страна и царство Арарата соответствуют Армении, во-вторых, гора ковчега священных сказаний Месопотамии (горы Кордук) находится в стране Урарту-Армения-Айастан. В статье показано, почему и каким образом из Армянского нагорья в роли горы-пристанища ковчега в шумеро-аккадско-вавилонской эпической традиции Месопотамии была выбрана гора Джуди, в еврейской традиции – Масис-Арарат, а позже, когда посредством христианства и ислама господствующим стал лишь миф о Ноевом ковчеге, в одном случае пристанищем ковчега стала гора Джуди, в другом – Масис-Арарат. И затем, вплоть до наших дней, ведущей горой в христианском мире стал Масис-Арарат, а в исламском мире – гора Джуди.

Artsruni Sahakyan – *The Jewish Source of the Formation of a Global Symbol: the Myth of the Mountain Sanctified by Noah's Ark*

The article provides reliable information stating that first, Mount Ararat, as well as the country and Kingdom of Ararat mentioned in The Holy Scripture, are identical to Armenia. Second, it states that the ark-carrying mountain of the sacred legends of Mesopotamia (the Korduk Mountains) is located in the country of Urartu-Armenia-Hayastan. The article reveals why and how in the Mesopotamian (Sumerian-Akkadian-Babylonian) epic tradition Mount Judy was singled out from the Armenian Highlands as the ark-carrying mountain, whereas in the Hebrew epic tradition it was Masis-Ararat, and later, when Noah's Ark myth became dominant due to Christianity and Islam, the only Noah's ark-carrying mountain became Mount Judy in one case, and Masis-Ararat in the other. Later on, to the present day Masis-Ararat has become the winning mountain in the Christian world and Mount Judy – in the Islamic world.